

ԱՍՏՈՒԾԱԾԱՇՈՒՆԶ ՄԱՏԵԱՆ

Քրիստոնեայ աշխարհին մէկ կարեւոր մասը Ս. Գիրքը կը նկատէ կեդրոնը եւ առանցքը իր ամէնօրեայ կեանքին: Հաւատացեալներու այս բանակը կ'ապրի ու կը գործէ Աստուածաշունչով: Իսկ հայերս ի՞նչ զգացում կը տածենք Աստուծոյ Խօսքին հանդէպ: Ո՞րքան է անոր ազդեցութեան չափը մեր ամէնօրեայ կեանքին վրայ ու եկեղեցական հաւատքի զօրութեան համար:

Ս. Գիրքը մեր մօտ ունեցած է եւ ունի արքայական աթոռ մը: Անկկա մեր թագն ու պարծանքն է: Մեր եկեղեցին 89 աստուածաշնչական սուրբերու յիշատակութիւն կը կատարէ. սակայն չունի յատուկ Աստուածաշունչի Օր, ինչպէս ուրիշ յարանուանութիւններ: Մենք Ս. Գիրքը պաշտամունքի առարկայ չենք բրած՝ թէւ «սուրբ» կը կոչենք անոր պարունակութիւնը, զայն երկիւղածութեամբ կը համբուրենք եւ մեր ճակատին կը մօտեցնենք:

Հայց. Առաք. եկեղեցին Աստուածաշունչը կը գործածէ բազմաթիւ առիթներով: Անկէ ընթերցումներ կ'ընենք օրական եօթն անգամ: Մեր եկեղեցւոյ մէջ գործածուող գիրքերուն երեք հատը կը պարունակեն միայն սուրբգրական հատուածներ: Եթէ ուշի ուշի հետեւինք մեր պաշտամունքի բովանդակութեան, ժամագիրքի, պատարագամատոյցի եւ շարակնոցի բառերուն, պիտի տեսնենք թէ *Աստուածաշունչը աղբիւրն ու հիմն է մեր բոլոր աղօթասացութիւններուն, խորհրդակատարութիւններուն եւ ծիսակատարութիւններուն:* Ան մեր ազգային պատմութեան մէջ հրաշագործի դեր կատարած է: Մեսրոպ Մաշտոց զայն հայերէնով կարենալ կարդալու համար հնարեց այբուրենը: Թարգմանիչ վարչապետներու առաջին գործը եղաւ Ս. Գիրքը ամբողջութեամբ ռսկեղնիկ հայերէնի վերածել: Քաջն Վարդան եւ իր զօրականները Քրիստոսի Աւետարանին սիրոյն նահատակուեցան:

Քրիստոսի Ընդհանրական եկեղեցիին մէջ մենք միակն ենք որ Ս. Գիրքին «*Աստուածաշունչ Մատեան*» սիրելի անունը տուած ենք: Աստուծոյ ձայնը, Աստուծոյ խօսքը եւ Աստուծոյ շունչը անոր իւրաքանչիւր էջին վրայ կը զգանք: Բայց հակառակ անոր որ Ս. Գիրքը այսքան կարեւոր տեղ ունի մեր եկեղեցիին մէջ, որպէս անհատ քրիստոնեաներ՝ մենք զայն կարդացող ժողովուրդ չենք, մինչդեռ միլիոնաւորներ Աստուածաշունչը ամբողջութեամբ մէկէ աւելի անգամներ կարդացած են, ու բազմաթիւ եկեղեցականներէ աւելի հմուտ են անոր բովանդակութեան:

Ես անձնապէս Ս. Գիրքը կը սիրեմ, եւ *զայն կարդալը ինձի սովորութիւն ըրած եմ:* Ան իմ հոգեւոր ու կրօնական կեանքիս անմահ մեծապէս օժանդակած է: Անկէ ստացած եմ աստուածսիրութեան, եղբայրսիրութեան եւ խաղաղասիրութեան ոգիս: Երբ Աստուածաշունչը կարդամ՝ կը նորոգուիմ հաւատքիս, սիրոյս ու յոյսիս մէջ: Ան ինձի տուած է համբերութեան, երկիւղի եւ մխիթարութեան զգացումները: Աղօթե՛նք եւ մաղթե՛նք որ *աշխարհ յառաջ ընթանայ՝ հետեւելով Ս. Գիրքէն բխող պատուիրաններուն եւ սիրոյ ու արդարութեան պատգամներուն:*

Կարէն Աւագ Քահանայ ԿՏԱՆԵԱՆ